Սալէհ Էյուպ տիրեաց նաեւ Դամասկոսի, Պալպէքայ, Տիրերիոյ, Ակաղոնի և Քերեքայ, և մեռաւ 'ի նոյն ամի, և թագաւորեաց որդի նորա Թուրան Շահ։

Ի կենդանութեան Սալէհ Էյուպայ Լատինք տիրեալ էին Տիմիաթի, և 'ի սմին ժամանակի անկեալ էր խռովութիւն 'ի մէջ նոցա և Իսլամաց. Լատինք խնդրէին զերուսաղէմ և զումանս 'ի ծովեզերեայ քաղաքաց, զի փոխանակ այնոցիկ տացեն նոցա զՏիմիաթ. բայց նոքա ոչ առին յանձն, եւ յետ տարւոյ միոյ առին զայն պատերազմաւ և Թուրան Շահ սպանաւ (1242)։

Պատմէ աստանօր Մարինոս Լատին թէ՝ 'ի սմին ժամանակի (1247) եկաց Պատրիարգ Լատինաց յԵրուսաղէմ Ռոպերդոս, և ընդ նմա էին Յակոբոս, Պանդալէոն և Թովմաս, և յետ կալոյ նոցա անդ սուղ ինչ ժամանակս, վերըստին արտաքսեալ աքսորեցան ընդ այլ կրօնաւորս եւ քրիստոնեայս։

Թագաւորն Գաղղիոյ Ս. Լուդովիկոս, որ վառեալ էր սիրտ սիրով ազատութեան Ս. Երկրին, յուսկ ուրեմն եհաս յարեւելս (1250) եւ դիմեալ զօրօք 'ի վերայ Տիմիաթ քաղաքի առ զնա 'ի ձեռաց Եգիպտացւոց՝ և անտի ուղղեաց զարշաւանս իւր 'ի մայրաքաղաքն Եգիպտոսի 'ի Գահիրէ. այլ չարաչար պարտեալ 'ի Սուլթանէն դերի վարեցաւ ինքն և շղթայակապ եդաւ 'ի բանտի, եւ զօրք նորա կոտորեցան առաւել 'ի ժանտախտէ քան 'ի սրոյ թշնամեաց։ Ականատես եղեւ անդ սպանման յետին ժառանգին ընտանեաց Սալահատինի. խուժադուժ Մեմլուք Պահարիտք յետ արկանելոյ զձեռն յարիւն տեառն իւրեանց. խորհեցան խորտակել զշղթայս Ս. Լուդովիկոսի և կացուցանել զնա Սուլթան 'ի վերայ իւրեանց՝ հիացեալ ընդ այնչափ առաքինութիւնս նորին։ Սակայն փոխեալ յետոյ զխորհուրդս իւրեանց ինքեանք կալան զթոռն Եգիպտոսի կարգաւ, իսկ Ս. Լուդովիկոս ազատեալ 'ի շղթայից գերութեան եկն յԱռորիս, ուր ընդդէմ եկաց ժամանակս ինչ արշաւանացն այլազգեաց, մանաւանդ Սուլթանացն Դամասկոսի և Բերիոյ, որ ստէպ՝ յարձակէին 'ի վերայ ծովեզերեայ քաղաքացն եղելոց 'ի ձեռս Լատինաց։ Եւ յետ երկուց ամաց ազատութեան իւրոյ ձեռն արկ